



**ՀԱՐՎԱԾԻՐ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻՆ ԻՐ ԻՄԿ ԶԵՆՔՈՎ.
ՀԱԿԱԳՐՈՂԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
(իններորդ ռազմավարություն)**

Առաջինը հարվածելը հարձակում սկսելն է: Այս քայլը կարող է ձեզ շատ անբարենպաստ վիճակի մեջ դնել, քազի դուք բացահայտվում և թույլ եք տալիս հասկանալ, թե որն է ձեր ծրագիրը՝ դրանով իսկ սահմանափակելով ձեր հնարավորությունները: Փոխարենը, բացահայտեք զսպվածության ուժը, սովորեք դանդաղել, որպեսզի հակառակ կողմը նախ հարձակվի, իսկ հետո հակազդեք թշնամուն բոլոր ճակատներում՝ ձեզ բնորոշ ողջ ճարպկությամբ: Եթե ձեր հակառակորդը հաստատակամ է, ներգրավեք նրան արագ հարձակման մեջ, որը կթուլացնի նրան: Սովորեք օգտագործել թշնամու անհամբերությունը, որքան հնարավոր է շուտ ձեզ հասնելու նրա ցանկությունը: Դա կօգնի ձեզ, որպեսզի նրան հանեք հավասարակշռությունից և հաղթեք: Դժվար պահերին մի հուսահատվեք և մի նահանջեք: Ցանկացած իրավիճակ կարող է փոխվել ի օգուտ ձեզ: Եթե դուք սովորեք զսպել ազդակները, սպասել անհրաժեշտ պահին անսպասելի հակազդեցիկ համար, ապա թուլությունը կվերածվի ուժի և հզորության:

ՔՈՂԱՐԿՎԱԾ ԱԳՐԵՍԻԱ

1805 թվականի սեպտեմբերին Նապոլեոն Բոնապարտը իր կարիերայի սկզբից ի վեր, թերևս, ամենածանր ճգնաժամն էր ապրում: Ավստրիան և Ռուսաստանը դաշինք կնքեցին նրա դեմ: Հարավում ավստրիական զորքերը հարձակվեցին Հյուսիսային Իտալիան գրաված ֆրանսիացիների վրա: Արևելքում ավստրիացի զենեքալ Կառլ Մաքքի ղեկավարած զորքերի մի մեծ խմբավորում սկսեց արշավը դեպի Բավարիա: Ռուսական զորքերը Միխայիլ Կուտուզովի հրամանատարությամբ շարժվում էր Մաքքին օգնելու: Նախատեսվում էր, որ ուժեղ և մեծաքանակ միացյալ բանակները այնուհետև կշարժվեն դեպի Ֆրանսիա: Վիեննայից արևելք ռուսներն ու ավստրիացիները սպասում էին լրացուցիչ ուժերի ժամանմանը, որոնք էլ պատրաստ էին լինելու գործի անցնել առաջին անհրաժեշտության դեպքում: Դաշնակիցների բանակները կրկնակի գերազանցում էին Նապոլեոնի բանակին:

Նապոլեոնի պլանն էր, օգտագործելով փոքր և շարժունակ կորպուսները, հերթով, մեկ առ մեկ լուծել դաշնակիցների բանակների հարցերը, նախքան նրանք կհասցնեին միավորել: Մինչ հակառակորդը բավարար թվով զորքեր կհավաքեր, նա ուղևորվեց Բավարիա՝ փորձելով այնտեղ հասնել Կուտուզովից շուտ և կանխել նրա միացումը Մաքքի ուժերին: Նապոլեոնին հաջողվեց Մաքքին խայտառակ պարտության մատնել Ուլմի մոտ՝ գրեթե առանց մեկ կրակոցի (տես ռազմավարություն 6): Այս անարյուն հաղթանակը իսկական գլուխգործոց էր, բայց Նապոլեոնը դա բավարար չհամարեց: Պահանջվում էր շրջապատել Կուտուզովին, նախքան ավստրիացիներից ուժերի ստանալը:

Այդ նպատակով Նապոլեոնն իր բանակի հիմնական մասը ուղղեց դեպի արևելք՝ դեպի Վիեննա՝ ռուսների համար այնտեղ ծուղակ ստեղծելու հույսով: Եղանակը նպաստավոր չէր զորքերի համար, ֆրանսիացի զինվորները հոգնել էին, նրանց մարշալները թույլ էին տալիս սխալը սխալի հետևից, և որ ամենակարևորն է՝ «նենգ» Կուտուզովը, նահանջելով, գործում էր նույնիսկ ավելի հմտորեն, քան հարձակման ժամանակ: Ֆրանսիական հարձակումից հաջողությամբ խուսափելով՝ Կուտուզովը իր զորքերը տարավ Վիեննայից հյուսիս-արևելք գտնվող Օլմուց (ժամանակակից Օլոմոուց) քաղաք, որտեղ տեղակայված էին ռուս-ավստրիական մնացած ուժերը:

Այժմ իրավիճակը հակառակն էր: Նապոլեոնի զորքերը հանկարծ հայտնվեցին մահացու վտանգի տակ: Նապոլեոնյան բանակի ուժը կորպուսների շարժունակության էր: Լինելով համեմատաբար փոքրաթիվ, նրանք անհատապես բավականին թույլ և խոցելի էին, ու լավագույնս գործում էին, երբ տեղակայված էին միմյանց մոտ հեռավորությամբ և անհրաժեշտության դեպքում միմյանց օգնության էին հասնում: Այժմ նրանք ցրված էին Մյունխենից մինչև Վիեննա երկար գծով, որը Նապոլեոնը գրավել էր Ուլմում Մաքքի նկատմամբ տարած հաղթանակից հետո: Տղամարդիկ տառապում էին քաղցից, հոգնածությունից և պարենի պակասից: Ավստրիացիները, որոնք կռվում էին ֆրանսիացիների դեմ Հյուսիսային Իտալիայում, հաջողության

չհասնելով այժմ վերադառնում էին, բայց նրանց չէր կարելի թույլ տալ շարժվել դեպի հյուսիս-արևելք, քանի որ դա կսպառնար Նապոլեոնի հարավային թևին: Մինչդեռ, Պրուսիայում, նկատելով Նապոլեոնի դժվարին վիճակը, մտածում էին միանալ կոալիցիային: Եթե այս որոշումը կայացվեր, պրուսացիները անդառնալի վնաս կպատճառեին ֆրանսիացիներին՝ կտրելով նրանց արդեն իսկ անկայուն և երկարաձգված հաղորդակցության ուղիները, իսկ հետո երկու բանակներ, շարժվելով հյուսիսից և հարավից, կջախջախեին ֆրանսիացիներին:

Իրավիճակը սարսափելի էր: Ի՞նչ էր մնում անել Նապոլեոնին: Շարունակել հետապնդել Կուտուզովին նշանակում էր վերջնականապես ցիրուցան անել ուժերը: Բացի այդ, ռուսական և ավստրիական բանակները, որոնց ընդհանուր թիվաքանակը մոտավորապես 90.000 էր, գերազանց դիրք էին զբաղեցնում Օլմուցում: Մյուս կողմից, տեղում մնալը նույնպես չափազանց ռիսկային էր: Բոլոր կողմերից շրջապատած թշնամական բանակները կարող էին ջախջախել ֆրանսիացիներին: Միակ հնարավորությունը, կարծես, նահանջն էր: Հենց այս լուծումն էին առաջարկում Նապոլեոնին բոլոր խորհրդականները, սակայն, հաշվի առնելով այն փաստը, որ եղանակն ավելի ու ավելի էր վատանում (նոյեմբերի կեսերին էր), և թշնամին նրանց մենակ չէր թողնում, նույնիսկ դա կարող էր թանկ արժենալ: Ավելին, նահանջը կնշանակեր, որ Ուլմի մոտ տարած փառահեղ հաղթանակը կփոշիանար, ինչը սարսափելի հարված կհասցներ ֆրանսիական զորքերի մարտական ոգուն: Բացի այդ, նահանջը ազդակ կհանդիսանար Պրուսիային պաշտոնական պատերազմի մեջ մտնելուն, իսկ անգլիացիները, տեսնելով, թե որքան խոցելի են այժմ ֆրանսիացիները, չեն հապաղի Ֆրանսիայի տարածք ներխուժումը: Ցանկացած որոշում, կարծես, հանգեցնում էր աղետի: Մի քանի օր Նապոլեոնը ընկղմված էր մտորումների մեջ, ոչ մեկի հետ չէր շփվում, կենտրոնացած ուսումնասիրում էր քարտեզները:

Այդ ընացքում, Օլմուցում Ավստրիայի կայսր Ֆրանց II-ը և Ռուսաստանի երիտասարդ ցար՝ Ալեքսանդր I-ը, իրենց բանակների հրամանատարության հետ միասին, ուշի ուշով հետևում էին Նապոլեոնի գործողություններին: Նրանք Նապոլեոնին անկյուն էին քաշել և չէին կասկածում, որ շուտով կկարողանան հաղթել նրան, ինչը պատասխան կլիներ Ուլմի օրոք նվաստացմանն ու շատ այլ բաների համար:

Եկավ նոյեմբերի 25-ը: Դաշնակիցների հետախույզները հայտնեցին, որ Նապոլեոնն իր բանակի մեծ մասը տեղափոխել է Աուստերլից, որը գտնվում էր Վիեննայի և Օլմուցի միջև:

Թվում էր, թե նա իր ուժերը հավաքում էր Պրատցենի բարձունքների ուղղությամբ, մի իրավիճակ, որը կարող էր վկայել մարտի նախապատրաստության մասին: Սակայն Նապոլեոնն ուներ ընդամենը 50.000 մարդ, գրեթե կրկնակի պակաս, քան Ռուսաստանի և Ավստրիայի միացիալ բանակները: Կարո՞ղ էր նա հույս ունենալ հաջող արդյունքի նման անբարենպաստ իրավիճակում: Այնուամենայնիվ, նոյեմբերի 27-ին Ֆրանց II-ը առաջարկեց ժամանակավոր զինադադար: Նապոլեոնը, չնայած

ամեն ինչին, վախեցրեց ավստրիացի կայսրին: Նույնիսկ ուժերի առկա հարաբերակցությանը նրա հետ մարտի բռնվելը ռիսկային էր: Անկեղծ ասած, կայսրը ժամանակ էր ձգում, որպեսզի դաշնակից ուժերը ամբողջությամբ շրջապատեին ֆրանսիացիներին և օղակը փակեին: Ճիշտ է, դաշնակիցների հրամանատարությունից ոչ ոք մինչև վերջ չէր հավատում, որ Նապոլեոնը տեղի կտա այս հնարքին:

Ի գարմանս նրանց, Նապոլեոնը տեսանելի ուրախությամբ ընդունեց զինադադար կնքելու առաջարկը: Տպավորություն էր ստեղծվում, որ նա խուճապային տրամադրություն ունենալով կառչում է ծղոտից: Այս ենթադրությունը կարծես հաստատվեց գրեթե անմիջապես՝ նոյեմբերի 29-ին, երբ Նապոլեոնը թողեց Պրատցենի բարձունքները՝ չհասցնելով գրավել դրանք: Այնուհետև նա նահանջեց բարձունքներից արևմուտքում գտնվող դիրքեր՝ անընդհատ վերադասավորելով իր հեծելազորը: Կարելի էր կարծել, որ նա լիովին շփոթված է:

Հաջորդ օրը Նապոլեոնը դիմեց ցարի հետ անձամբ հանդիպելու խնդրանքով: Բայց իր փոխարեն Ալեքսանդրը հանդիպման ուղարկեց Էմիսարին, որը, վերադառնալով, զեկուցեց, որ Նապոլեոնին չի հաջողվել թաքցնել իր վախերն ու կասկածները: Զինադադարի պայմանները բավականին կոշտ էին, բայց Նապոլեոնը, չնայած չընդունեց դրանք, բայց հնազանդորեն լսեց: Մինչդեռ նա լուռ էր, նույնիսկ խոնարհ, և ընկճված տեսք ուներ: Ցարի համար այս լուրը կարծես դուրեկան մեղեդի հնչեր ականջներին: Ալեքսանդրը այրվելով Նապոլեոնի հետ բախման սպասումից, հոգնատանջ եղավ:

Թողնելով Պրատցենի բարձունքները՝ Նապոլեոնը կարծես իրեն ավելի անբարենպաստ դրության մեջ գցեց: Հարավից նրա դիրքերը թուլացան, իսկ նահանջի ճանապարհը՝ Վիեննայից հարավ-արևմուտք, աղետալիորեն անպաշտպան էր: Դաշնակից բանակները կարող էին գրավել Պրատցենի բարձունքները, այնուհետև շրջվել դեպի հարավ, ճեղքել Նապոլեոնի պաշտպանության թույլ տեղամասերը, կտրել նրա փախուստի ճանապարհը, ապա շարժվելով դեպի հյուսիս՝ ամբողջությամբ փակել շրջապատման օղակը և ավարտել ֆրանսիական բանակի լիակատար ոչնչացումը: Ուրիշ ի՞նչ կարող էին նրանք ակնկալել: Ավելի բարենպաստ հնարավորություն անհնար էր պատկերացնել: Ալեքսանդր ցարը և նրա երիտասարդ գեներալները եռանդուն կերպով համոզեցին ավելի զգույշ ավստրիացիներին և վերջապես համոզեցին նրանց սկսել հարձակումը:

Հարձակումն սկսվեց դեկտեմբերի 2-ի վաղ առավոտյան: Երկու ոչ մեծ դիվիզիաներ հյուսիսից սկսեցին առաջխաղացում դեպի ֆրանսիացիները: Միննույն ժամանակ ավստրիական և ռուսական ուժերը շարունակական հոսքով շարժվեցին դեպի Պրատցենի բարձունքներ: Գրավելով այն՝ միացյալ ուժերը շարժվեցին դեպի հարավ՝ դեպի ֆրանսիացիների պաշտպանության թույլ հատվածը: Չնայած նրանք հանդիպեցին դիմադրության, բայց արագորեն հաղթահարելով այն, շուտով գրավվեցին հիմնական դիրքեր, ինչը հնարավորություն տվեց շրջվել դեպի հյուսիս և շրջապատել Նապոլեոնի բանակը:

Սակայն առավոտյան ժամը իննին, երբ դաշնակից զորքերի վերջին ջոկատները (ընդհանուր առմամբ մոտ 60.000 մարդ) մոտեցան բարձունքներին և ուղղվեցին դեպի հարավ, դաշնակից հրամանատարության շրջանում լուրեր տարածվեցին, որ անսպասելի բան է տեղի ունենում: Հանկարծ ֆրանսիացիների մի մեծ ստորաբաժանում, որին մինչ այդ ոչ ոք չէր նկատել, քանի որ այն թաքնված էր Պրատցենի բարձունքների մոտ, հանկարծակի հայտնվեց և սկսեց շարժվել ուղիղ դեպի հարավ՝ դեպի Պրատցեն քաղաք, որտեղ գտնվում էր դաշնակիցների ռազմաճակատի կենտրոնը:

Կուտուզովն առաջինը գիտակցեց սպառնացող վտանգը: Դաշնակիցները այնքան շատ ուժեր էին նետել ֆրանսիական ճակատը ճեղքելուն, որ իրենց կենտրոնն թողել էին անպաշտպան: Զորահրամանատարը փորձեց հետ կանչել հարավ շարժվող վերջին ջոկատները, բայց արդեն ուշ էր:

Առավոտյան ժամը տասնմեկին ֆրանսիացիներին հաջողվեց վերագրավել բարձունքները: Ավելի վատն այն էր, որ հարավ-արևմուտքից ֆրանսիացիներին օգնության էին հասել լրացուցիչ ուժեր, ուստի հարավային դիրքերն այժմ անվտանգ էին, ինչը թույլ չէր տալիս դաշնակիցներին շրջապատել Նապոլեոնի բանակը: Իրավիճակն այժմ ամբողջովին փոխվեց:

Ֆրանսիացիները Պրատցենի միջով շտապեցին դեպի դաշնակցային դիրքերի կենտրոն՝ փորձելով կտրել զորքերի նահանջի ճանապարհը դեպի հարավ: Այժմ դաշնակից ուժերը հյուսիսում, կենտրոնում և հարավում մասնատված և մեկուսացված էին միմյանցից: Ռուսները, որոնք գտնվում էին ամենահարավային դիրքում, փորձեցին նահանջել դեպի հարավ, բայց սառած լճակների և լճերի վրա Նապոլեոնի հրետանային կրակից հետո հազարավոր զինվորների զոհվեցին: Սառույցը կտրվում էր, որին հարվածում էր հրետանին, և զինվորները խեղդվում էին: Կորուստները ահեղ էին: Ժամը հինգին ջախջախումն ավարտվեց: Ավստրիայի և Ռուսաստանի միացյալ բանակը հրեշավոր կորուստներ ունեցան, անհամեմատ ավելի մեծ, քան ֆրանսիացիները: Պարտությունն ամբողջական էր: Վնասն այնպիսին էր, որ Միությունը փլուզվեց: Նապոլեոնին անհասկանալի կերպով հաջողվեց անխուսափելի պարտությունը վերածել իր ամենամեծ հաղթանակի:

Մեկնաբնում

Առևտրի ճակատամարտին նախորդող ճգնաժամի ընթացքում Նապոլեոնի խորհրդականներն ու մարշալները նահանջից բացի ուրիշ բանի մասին չէին մտածում: Երբեմն թվում էր, թե ավելի լավ է ընդունել անհաջողությունը, ընդունել այն առանց համառության և անցնել հարձակումից պաշտպանության: Մյուս կողմում կանգնած էին դաշնակիցները, որոնք նույնքան վստահ էին Նապոլեոնի թուլության մեջ: Նրանք կարող էին պլանավորել նրան շրջապատումը կամ հարձակվել երկու դեպքում էլ պլանավորված էր հարձակողական գործողություններ:

Նրանց մեջտեղում կանգնած էր Նապոլեոնը, որը, որպես ռազմավար, կարողացավ մի կողմից բարձրանալ իր սեփական խորհրդականներից և մարշալներից, մյուս կողմից՝ իր դաշնակիցներից վեր: Նրա գերազանցությունը

դրսևորվեց մտքի ուշագրավ ճկունությամբ և ճարպկությամբ: Նրա կարծիքով, պաշտպանական դիրքը հիանալի միջոց էր քողարկելու հարձակման կամ հակագրոհի նախապատրաստությունները, իսկ հարձակողական գործողությունները հաճախ հիանալիորեն քողարկում են ապահովում՝ օգնելով շեղել ուշադրությունը թույլ դիրքից: Աուստերլիցում Նապոլեոնի բեմադրած ներկայացումը ո՛չ նահանջ էր, ո՛չ էլ հարձակում, այլ շատ ավելի նուրբ և հմուտ մանևր: Նա միաձուլեց պաշտպանությունը հարձակման հետ, ինչը հանգեցրեց հիանալի ծուղակի:

Վիեննան գրավելուց հետո Նապոլեոնը նախ շարժվեց դեպի Աուստերլից՝ ստեղծելով հարձակողական մանևրի տպավորություն: Սա անհանգստացրեց ավստրիացիներին և ռուսներին, ովքեր, չնայած թվաքանակը զգալի առավելության, այնուամենայնիվ հասկանում էին, թե ինչպիսի վտանգավոր թշնամու հետ գործ ունեն: Այնուհետև Նապոլեոնը նահանջեց, նահանջեց և պաշտպանական դիրք գրավեց: Հետագայում, կարծես, նա չէր կարողանում որոշել՝ առաջ շարժվել, թե նահանջել: Նրա գործողությունները շփոթության տպավորություն թողեցին: Ցարի ներկայացուցչի հետ հանդիպման ժամանակ նա՝ ռազմավարական մտադրությամբ, բեմադրեց իսկապես թատերական ներկայացում՝ ցույց տալով իր պարտությունն ու շփոթմունքը: Նապոլեոնը ապացուցեց, որ տաղանդավոր դերասան է՝ ձևացնելով թուլություն և խոցելիություն, ինչը թշնամուն դրդեց հարձակման:

Այս բոլոր խորամանկություններն ու մանևրները այնքան շփոթեցրին դաշնակիցներին, որ նրանք մոռացան զգուշության մասին և այլևս չփորձելով կանխատեսել Նապոլեոնի հնարավոր քայլերը, սկսեցին պատրաստվել հարձակման՝ այդպիսով իրենց իսկ դնելով հարվածի տակ: Օլմուցում դաշնակիցների զբաղեցրած դիրքը այնքան ուժեղ և գերիշխող էր, որ Նապոլեոնի միակ ճանապարհը նրանց դուրս հանելն էր այնտեղից: Հենց այդպես էլ նա վարվեց: Այնուհետև, դաշնակիցների անխոհեմ հարձակումից պաշտպանվելու փոխարեն, նա անսպասելիորեն ինքն անցավ հարձակման և հակագրոհի: Այսպիսով, Նապոլեոնը շրջեց ճակատամարտի ընթացքը ոչ միայն ֆիզիկապես, այլև հոգեբանորեն: Երբ հարձակվող բանակը հանկարծ ստիպված է լինում պաշտպանվել, նրա մարտական ոգին կտրուկ անկում է ապրում:

Եվ իսկապես, դաշնակիցների զորքերում խուճապ սկսվեց, նահանջը դեպի սառած լճեր, որտեղ Նապոլեոնը նրանց համար գերեզման էր պատրաստել:

Մենք հիմնականում գիտենք, թե ինչպես հարձակվել և ինչպես պաշտպանվել: Կամ մենք հարձակվում ենք փորձելով անգուսպ ճնշման օգնությամբ հասնել ցանկալի արդյունքի, կամ, ընդհակառակը, մենք ամեն ինչ անում ենք հիանալի քողարկման համար, որն օգնում է ուշադրությունը շեղել: Այն ներկայացումը, որը Նապոլեոնը խաղաց Աուստերլիցի օրոք, ոչ նահանջ էր, ոչ էլ հարձակում, այլ մի տեսակ ավելի նուրբ և հմուտ հնարք էր: Նա պաշտպանությունը միաձուլեց հարձակման հետ, և արդյունքում ստացավ գերազանց ծուղակ:

Հարձակողական գործողությունները սովորություն դարձնելով՝ մենք մեզ համար շատ թշնամիներ ենք ստեղծում և, ավելին, ռիսկի ենք դիմում կորցնելու մեր

ինքնատիրապետումը և մեր սեփական վարքագծի նկատմամբ վերահսկողությունը: Սակայն նույնքան վատ է անընդհատ պաշտպանողական դիրքում մնալը, քանի որ եթե նման անպատասխան քայլերը վատ սովորություն է դառնում, մենք անընդհատ թույլ ենք տալիս, որ մեզ անկյունում քշեն: Երկու դեպքում էլ մենք բավականին կանխատեսելի ենք, և մեր գործողությունները հեշտ է կանխագուշակել:

Փոխարենը, մտածեք Նապոլեոնի կողմից այդքան տաղանդավոր կիրառված երրորդ տարբերակի մասին: Երբեմն իսկապես օգտակար է անպաշտպան և թույլ երևալը: Դրա շնորհիվ մրցակիցները կղաղարեն ձեր մեջ տեսնել սպառնալիք և կհանգստանան՝ կորցնելով զգոնությունը: Բայց ճիշտ պահին, զգալով բացը, դուք արագորեն կվերակառուցվեք հարձակման համար:

Փորձեք վերահսկողության տակ պահել ձեր ագրեսիվությունը, իսկ թուլությունն օգտագործեք իրական մտադրությունները քողարկելու համար: Այդ դեպքում դժվար իրավիճակը, երբ շրջապատի մարդիկ կարծում են, որ դուք դատապարտված եք և մտածում եք միայն փախչելու մասին, ձեզ կծառայի որպես ոսկե հնարավորություն: Թուլություն ձևացնելով՝ դուք կարող եք շփոթեցնել ագրեսիվ հակառակորդին, որպեսզի նրանք անվախ մոտենան՝ մոռանալով զգուշավորության մասին: Հիմա, երբ դուք նրանց անակնկալի եք բերել, երբ նրանք ամենաքիչն են սպասում, ժամանակն է անցնել հարձակման: Այս կերպ միաձուլելով հարձակումն ու նահանջը՝ դուք միշտ կգերազանցեք ձեր պակաս ճկուն հակառակորդներին: Լավագույն հարվածը այն է, որի պատրաստվածությունը աննկատ է մնում:

Որքան էլ անհույս լինեն իրավիճակն ու հանգամանքները, մի հուսահատվեք: Երբ ամեն ինչ վախ է ներշնչում, մնացեք անվախ: Երբ շրջապատված եք վտանգներով, մի վախեցեք դրանցից: Երբ հնարավորություններ չկան, ապավինեք հնարամտությանը: Երբ ձեզ անակնկալի են բերում, անակնկալի բերեք ձեր թշնամուն:

Սուն Յզի (Մ. թ. ա. IV դար)

ՋԻՈՒ-ՋԻՑՈՒ

1920 թվականին դեմոկրատական կուսակցությունը նախագահական ընտրությունների թեկնածու առաջադրեց Օհայոյի նահանգապետ Ջեյմս Քոքսին: Ենթադրվում էր, որ նա կդառնա հեռացող նախագահ Վուդրո Վիլսոնի իրավահաջորդը: Այդ ժամանակ փոխնախագահի պաշտոնի հավակնորդ էր ճանաչվել երեսուներեամյա Ֆրանկլին Դելանո Ռուզվելտը:

Ռուզվելտը ծառայել էր Վիլսոնի օրոք որպես ռազմածովային ուժերի նախարարի օգնական: Ավելի կարևոր հանգամանքն այն էր, որ նա ազգական էր Թեոդոր Ռուզվելտին, որը նախագահ էր 20-րդ դարի առաջին տասնամյակում և դեռ բավականին հանրաճանաչ էր երկրում:

Հանրապետականները առաջադրեցին Ուորեն Ջ. Հարդինգին: Քարոզարշավը խոստանում էր լինել ծանր: Հանրապետականները շատ փող ունեին և խաղում էին Հարդինգի՝ որպես «պարզ, շփվող մարդու» կերպարի վրա ու խուսափում էին վիճահարույց թեմաներից: Քոքսն ու Ռուզվելտը պատասխանեցին կատաղի հարձակումներով՝ իրենց քարոզարշավը կառուցելով Վիլսոնի հիմնական թեզի շուրջ՝ ԱՄՆ-ի մասնակցությունը Ազգերի լիգային, որը, նրանց կարծիքով, խաղաղություն և բարգավաճում կբերի երկրին: Ռուզվելտը քարոզարշավ անցկացրեց ամբողջ երկրով մեկ՝ ունենալով ելույթը ելույթի հետևից: Գաղափարն այն էր, որ մերկ ոգևորությունը հակադրվեր հանրապետականներին, ովքեր իրենց քարոզարշավում զգալի միջոցներ էին ներդրել: Սակայն նախընտրական մրցավազքը ծայրահեղ անբարենպաստ էր Ռուզվելտի համար: Հարդինգը նախագահական ընտրություններում հաղթեց ջախջախիչ առավելությամբ: Սա ամերիկյան ընտրությունների պատմության մեջ ամենահամոզիչ հաղթանակներից մեկն էր:

Մեկ տարի անց Ֆ. Դ. Ռ. - ն, ինչպես նրան անվանում էին ամերիկացիները, հիվանդացավ պոլիոմիելիտով, հիվանդության արդյունքում նա դարձավ անդամալույծ: Գիտակցելով իր ֆիզիկական թուլությունը և զգալով մահվան մոտիկությունը, Ֆ. Դ. Ռ. - ն դարձավ ինքնանփոփ, շատ մտածեց և շատ բան տեսավ նոր լույսի ներքո: Քաղաքականության աշխարհը արատավոր է և կառուցված է բռնության վրա: Ընտրություններում հաղթելու համար քաղաքական գործիչները պատրաստ են ամեն ինչի, նրանք մրցակցին տապալելու համար ոչ մի միջոցից չեն խորշում: Մարդը, ով փորձում է առաջադրվել նկատելի պաշտոնի, կամա թե ակամա պետք է իրեն այնպես անմաքուր ու անսկզբունքային պահի, ինչպես իր մրցակիցները, այլապես անհնար է ոչ միայն հաջողության հասնել, այլև նույնիսկ պարզապես գոյատևել:

Բայց այս մոտեցումը դուր չեկավ Ռուզվելտին, բացի այդ, նա պարզապես ֆիզիկապես իվիճակի չէր դա անելու: Նա որոշեց փորձել մշակել բոլորովին այլ քաղաքական ոճ, որը նրան կառանձնացներ ամբոխից և լուրջ առավելություն կտար:

1932 թվականին, երբ ավարտվեց Ֆ.Դ.Ռ.-ի պաշտոնավարումը՝ Նյու Յորքի նահանգապետի պաշտոնում, նա առաջադրեց իր թեկնածությունը նախագահական ընտրություններում հանրապետական թեկնածու Հերբերտ Հուվերի դեմ: Երկիրը մեծ դեպրեսիայի մեջ էր, և Հուվերը կարծես չգիտեր, թե ինչպես վարվել ստեղծված իրավիճակում: Պաշտպանությունում խաղալ, արդարացնելով իր կուսակցության քաղաքականությունը, որը երկիրը հասցրել էր ճգնաժամի, դժվար էր, ուստի Հուվերը նախընտրեց այն սցենարը, որով դեմոկրատները գործել էին 1920 թվականին: Նա անցավ հարձակման և Ռուզվելտին մեղադրեց սոցիալիզմին նվիրվածության մեջ: Իսկ Ռուզվելտն իր հերթին շատ էր շրջում երկրով մեկ՝ նախանշելով երկիրը ստեղծված իրավիճակից դուրս բերելու իր ծրագրերը: Նա առանձնապես չէր խորանում մանրամասների մեջ և չէր արձագանքում Հուվերի հարձակումներին, բայց ցուցադրում էր կոմպետենտություն, պահի խորը ըմբռնում և, բացի այդ, բառացիորեն հանգիստ էր և վստահություն էր ներշնչում: Ընդհակառակը, Հուվերը կտրուկ և

ագրեսիվ էր իրեն պահում: Թերևս դեպրեսիայի պատճառով նրա ցանկացած խոսք և գործողություն նախապես դատապարտված էր ձախողման, բայց նա պարտվեց շատ ավելի ջախջախիչ արդյունքով, քան կարծում էր: Ռուզվելտի հաղթանակի մասշտաբը, գրեթե մաքուր, անակնկալ էր բոլորի համար:

Ընտրություններից հետո առաջին շաբաթներին Ռուզվելտը հազվադեպ էր հայտնվում հանրության առաջ: Աստիճանաբար, Հանրապետական հակառակորդները սկսեցին օգտագործել նրա բացակայությունը հարձակումների համար՝ ենթադրություններ անելով, որ նորաթուխ նախագահը վախեցել է, որ պատրաստ չէ կատարել իր պարտականությունները: Քննադատությունը դառնում էր ավելի կծու և չարամիտ: Երդմնակալության ժամանակ Ռուզվելտը ոգեշնչված էլույթ ունեցավ, որը հայտնի է որպես «Ֆ.Դ.Ռ-ի հարյուր օր»: Նա թվացյալ պասիվությունից անցավ այնպիսի ակտիվ և վճռական գործողությունների, առաջին հերթին օրենսդրության փոփոխության ոլորտում, որ երկիրն անմիջապես զգաց, որ վերջապես ինչ - որ բան փոփոխվում է: Ծաղրական քննադատությունը դադարեց:

Հաջորդ մի քանի տարիների ընթացքում նույն սխեման բազմիցս կրկնվեց: Գերագույն դատարանը, օրինակ, բազմիցս մերժեց Ռուզվելտի նախագծերը, և բոլոր շերտերի թշնամիները (սենատոր Հյու Լոնգը և արհմիության առաջնորդ Ջոն Լ.Լյուիսը ձախերից, կրոնական առաջնորդ Չարլզ Քոֆլինը և հանրապետականների ազդեցիկ գործարարները) մամուլում անընդհատ թշնամական արշավներ սկսեցին: Ռուզվելտը ստվերում էր՝ փորձելով ուշադրություն չգրավել: Նրա բացակայության ժամանակ գրոհները վերսկսվում էին նոր ուժով, Ֆ.Դ.Ռ. - ի խորհրդականները սարսափում էին, բայց նա միայն սպասում էր՝ ճշգրիտ հաշվարկելով ժամանակը: Վաղ թե ուշ բոլորը կձանձրանան այս անվերջ հարձակումներից և մեղադրանքներից, մասամբ այն պատճառով, որ հրաժարվելով պատասխանել դրանց, նա անխուսափելիորեն բացահայտում էր հակառակորդների կողմնակալությունն ու կողմնապաշտությունը: Այնուհետև, ընտրություններից մեկ ամիս առաջ, Ռուզվելտն անցավ հարձակման՝ ապացուցելով իր դիրքերը: Նա այնքան հանկարծակի և այնպիսի ուժով հարձակվեց մրցակիցների վրա, որ, որպես կանոն, նրանց անակնկալի բերեց: Հարձակման ժամանակն ընտրվում էր այն ակնկալիքով, որ հասարակությունը խառնվի՝ անհրաժեշտ պահին ուշադրությունը հրավիրելով իր վրա:

Ռուզվելտի «լուռության» ժամանակաշրջանում նրա հակառակորդների հարձակումները սաստկացան՝ դառնալով ավելի ու ավելի թշնամական, բայց դա նրա համար միայն հիմք էր հանդիսանում, որը օգտագործում էր հետագայում՝ շահարկելով հիստերիան իր օգտին և իր հակառակորդներին ներկայացնում էր աբսուրդության և ծիծաղելի լինելու լույսի ներքո: Ամենահայտնի օրինակը տեղի է ունեցավ 1944 թվականի նախագահական ընտրությունների ժամանակ: Այն ժամանակվա հանրապետական թեկնածու Թոմաս Դյուին կազմակերպեց մի շարք քննադատություններ Ռուզվելտի հասցեին՝ թիրախավորելով նրա կնոջը, որդիներին և նույնիսկ շանը՝ Ֆալու անունով շոտլանդական տերիերին, որին նա մեղադրեց

հարկատուների փողերով ապրելու մեջ: Ռուզվելտը նախընտրական ելույթում նշեց, որ. «Հանրապետական առաջնորդների համար բավարար չէ անձամբ հարձակվել ինձ կամ իմ որդիների վրա, նրանք հիմա թիրախավորել են իմ շան՝ Ֆալուին: Ի տարբերություն իմ ընտանիքի անդամների, Ֆալուն շատ վիրավորված էր, երբ իմացավ, որ Հանրապետական գիտաֆանտաստիկ գրողները պատմություն են հորինել, թե ես մոռանալով նրան Ալեուտյան կղզիներում հաճանավ եմ ուղարկել նրա հետևից, ինչը հարկատուներին արժեցել է ոչ այն է երկու, ոչ այն է երեք, ոչ այն է ութ, ոչ այն է քսան միլիոն դոլար, նրա շոտլանդական հոգին շատ վրդովված էր: Այդ ժամանակից ի վեր նա չի կարողանում իր տեղ գտնել: Ես սովոր եմ լսել իմ մասին չար զրպարտություններ, բայց կարծում եմ, որ իրավունք ունեմ առարկել, երբ այդ պասկվիլները դիպչում են իմ շանը»:

Ելույթը ոչ միայն զվարճալի և սրամիտ էր, այլև անողոր արդյունավետ: Եվ ի՞նչ կարող էին ասել հակառակորդները, երբ իրենց սեփական խոսքերը, որոնք մեջբերվել էին Ռուզվելտի ելույթներում, զենք էին դառնում նրանց դեմ:

Տարիների ընթացքում Ռուզվելտի հակառակորդները գնալով ուժասպառ էին լինում, բայց դեռևս չէին կարողանում հաղթել նրան՝ միավորներ վաստակելով, երբ դա էական չէր, և ընտրություններից ընտրություններ պարտվելով նրանից:

Մեկնաբանում

Ռուզվելտը չէր հանդուրժում, որ իրեն անկյուն զցեն՝ առանց տարբերակներ թողնելու: Դա մասամբ պայմանավորված էր նրա մեղմ բնավորությամբ: Նա նախընտրում էր հարմարվել հանգամանքներին, մանկրել՝ փորձելով հնարավորինս քիչ ջանք գործադրել: Դա նաև պայմանավորված էր նրա ֆիզիկական վիճակով: Նա ատում էր անօգնականության և թերաթեքության զգացումը: Սկզբում, երբ Ռուզվելտը քարոզարշավ էր անցկացնում ամերիկյան տիպիկ ընտրական ոճով՝ ագրեսիվ ինքնավստահությամբ, կրքոտ կերպով պաշտպանելով իր դիրքորոշումը և հարձակվելով իր հակառակորդների վրա, նա իրեն անհույս կերպով սահմանափակված էր զգում: Այս դժբախտ փորձը նրան շատ բան սովորեցրեց, մասնավորապես, նա հայտնաբերեց զսպվածության մեջ թաքնված ուժը: Այդ պահից սկսած նա փոխեց իր մոտեցումը՝ իր հակառակորդներին հնարավորություն տալով առաջինը հարվածել: Հարձակվելով Ռուզվելտի վրա կամ քննադատելով նրա քաղաքականությունը, նրանք մերկացնում էին իրենց պաշտպանության թույլ կողմերը և հնարավորություն էին ընձեռնում հետագայում օգտագործել իրենց սեփական հայտարարությունները իրենց իսկ դեմ: Լռելով կատաղի և ագրեսիվ հարձակումների ժամանակ՝ Ռուզվելտը գրգռում էր իր հակառակորդներին՝ ստիպելով նրանց կորցնել հավասարակշռությունն ու վերահսկողությունը և անցնել սահմանը (ոչինչ նրանց այնքան չէր նյարդայնացնում և հունից հանում, որքան արձագանքի բացակայությունը), քանի որ չար և երբեմն անհեթեթ մեղադրանքները գործածվում էր նրանց դեմ: Նրանց սեփական զայրույթը թուլացնում էր նրանց՝

դարձնելով խոցելի, և այդ ժամանակ Ռուզվելտը հայտնվելով ստվերից՝ մահացու հարված էր հասցնում նրանց:

Ռուզվելտի ոճը կարելի է համեմատել ջիու-ջիթսուի՝ ինքնապաշտպանության ճապոնական արվեստի հետ: Հմուտ ջիու-ջիթսուի մասնագետը ծաղրում է իր հակառակորդին՝ մնալով հանգիստ և զուսպ, գայթակղելով նրան առաջինը անցնել հարձակման: Երբ հակառակորդը առաջինն է հարվածում կամ կիրառում է բռնում հնարքը՝ հրում կամ քաշում, նա շարժվում է համաժամանակյա՝ ուղղելով նրա ուժը նրա դեմ: Նա ճկուն է և արագ, ճիշտ պահին քայլ է անում առաջ կամ հետ, այնպես որ հարվածի համար ճոճվող հակառակորդը կորցնում է հավասարակշռությունը: Մա հաճախ հանգեցնում է անկման, և նույնիսկ եթե հակառակորդը կարողանում է ոտքի վրա մնալ, նա դեռ ժամանակ չի ունենում իրեն հավաքելու, և դա հակահարված տալու իդեալական ժամանակն է: Ագրեսիվ ճնշումը վերածվում է թուլության, քանի որ այն հակառակորդին ներքաշում է հարձակողական գործողությունների՝ ստիպելով նրան բացահայտել իր ռազմավարական ծրագրերը: Բացի այդ, սկսելով հարձակումը, շատ դժվար է ժամանակին կանգ առնել:

Քաղաքականության մեջ ջիու-ջիցուի ոճն անգնահատելի առավելություններ է տալիս: Այն թույլ է տալիս պայքարել առանց ագրեսիվ տեսք ունենալու: Այն օգնում է խնայել ուժն ու էներգիան, քանի որ մինչ ձեր մրցակիցները ուժասպառ են լինում, դուք մնում եք լիութ վիճակում: Բացի այդ, այս ոճը ընդլայնում է հնարավորությունները՝ թույլ տալով ձեզ կառուցել հակահարված՝ հիմնվելով այն նյութի վրա, որը Ձեզ առաջարկում են օպոնենտները:

Ագրեսիան խաբուսիկ է, դա թուլություն է պարունակում: Ագրեսորները չեն կարողանում հաղթահարել սեփական հույզերը: Նրանք չեն կարող համբերատար լինել հարմար պահի սպասելու համար, չեն կարող փորձել տարբեր մոտեցումներ և չեն կարող կանգ առնել մտածելու և փորձելու անակնկալի բերել թշնամուն: Մոլեգնող կատաղության հոսքի մեջ նրանք ուժեղ են թվում, բայց որքան երկար է տևում հարձակումը, այնքան ավելի ակնհայտ է դառնում հիմքում ընկած թուլությունն ու անապահովությունը: Հեշտ է, սեփական անգսպությանը և անհամբերությանը զիջելով, կատարել առաջին քայլը, բայց շատ ավելի մեծ ուժ է պահանջվում զսպվելու համար՝ համբերատար զիջելով մյուսին խաղը վարելու հնարավորությունը: Այսպիսի ներքին ուժը գրեթե միշտ ի վիճակի է հաղթել մակերեսային ագրեսիվությանը:

Ժամանակն աշխատում է ձեզ համար: Թող ձեր հակագրոհները լինեն կայծակնային և հանկարծակի, ինչպես կատուն, որը, լուռ սողալով աննկատ, արագորեն հարձակվում է որսի վրա:

Ջիու-ջիցուի ոճը կարելի է օգտագործել գրեթե ամեն ինչում, անկախ նրանից, թե ինչ եք զբաղված, թող այն դառնա առօրյա կյանքում ագրեսիվությանը արձագանքելու ձեր ձևը, միջոցը, որը թույլ կտա համարձակորեն դիմակայել հանգամանքներին:

ՈԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆԱԼԻՆԵՐԸ

Հազարավոր տարիներ առաջ, ռազմական պատմության արշալույսին, տարբեր մշակույթների ստրատեգներ նշում էին մի յուրահատուկ երևույթ՝ մարտում պաշտպանվող կողմը հաճախ հաղթում է: Դրա համար ամենատարբեր բացատրություններ էին տալիս: Նախ, երբ հրահրողը հարձակվում էր, նա այլևս հակառակորդին հարվածելու նոր բան չուներ, իսկ պաշտպանվող կողմը բոլոր հնարավորություններն ուներ հասկանալու նրա պլանները և պատասխան գործողություններ ձեռնարկելու: Երկրորդ, եթե պաշտպանվողին հաջողվում էր ինչ-որ կերպ հետ մղել առաջին հարձակումը, հարձակվողը հայտնվում դիրքերը թուլանում էին, նրա բանակը հյուծված էր, իսկ կարգապահությունը՝ անկում էր ապրում: (Երկիրը գրավելու համար ավելի շատ ուժ և էներգիա է պետք, քան այն պահելու համար:) Եթե պաշտպաններին հաջողվում էր օգտվել այս առավելությունից և հակազդի սկսել, դա հաճախ բավարար էր հարձակվողին նահանջելու համար:

Հակահարվածի արվեստը մշակվել է հենց այս դիտարկումների հիման վրա: Դրա հիմնարար սկզբունքներն են՝ թշնամուն ստիպել անել առաջին քայլը, ակտիվորեն խաբել նրան, հրահրել հարձակման, որը կհյուծի և կհանի նրան հավասարակշռությունից, ապա շահարկել նրա թուլությունն ու առաջացած անկարգությունը: Այս արվեստը կատարելագործվել է այնպիսի ռազմական տեսաբանների կողմից, ինչպիսին է Սուն Յզին, և գործնականում հղկվել է այնպիսի մեծ զորահրամանատարի կողմից, ինչպիսին է Ֆիլիպ Մակեդոնացին:

Հակազդից, ըստ էության, առաջացել և զարգացել է ամբողջ ժամանակակից օպերատիվ արվեստը: Որպես պատերազմի նկատմամբ խորամանկ, խաբուսիկ մոտեցման առաջին օրինակ՝ այն ներկայացնում է մտքի զարգացման իսկական առաջընթաց: Ուղիղ, դաժան պատերազմը փոխարինվում է նուրբ, խաբուսիկ հակահարվածով, որն օգտագործում է թշնամու ուժը՝ նրան հաղթելու համար: Չնայած հակազդի ռազմական գործի ամենահին և հիմնարար ռազմավարություններից մեկն է, այն շատ առումներով մնում է ավելի արդյունավետ և ժամանակակից պայմաններում՝ ցուցադրելով դրա ճկունությունն ու բազմակողմանիությունը: Դա Նապոլեոն Բոնապարտի, Լոուրենս Արաբացու, Էրվինի Ռոմելի և Մաո Յզեդունի նախընտրած ռազմավարությունն էր:

Հակազդի սկզբունքը կիրառելի է ցանկացած կոնֆլիկտային միջավայրում, կոնֆլիկտի ցանկացած իրավիճակում կամ ձևով, քանի որ այն հիմնված է մարդկային բնույթի որոշակի և անփոփոխ հատկությունների վրա: Մենք բոլորս անհամբեր արարածներ ենք: Մեզ համար դժվար է, գրեթե անտանելի է ինչ-որ բանի սպասելը: Մենք ուզում ենք, որ մեր ցանկությունները կատարվեն որքան հնարավոր է շուտ: Մա մեր թերությունն է, մեր թուլությունը, քանի որ հաճախ մենք ներքաշվում ենք ինչ-որ բանի մեջ՝ առանց կշռադատելու և մտածելու: Առաջ շարժվելով՝ մենք սահմանափակում ենք մեր սեփական հնարավորությունները և հաճախ առաջացնում ենք ամեն տեսակի խնդիրներ: Ընդհակառակը, համբերությունը, հատկապես

պատերազմում, բավականին լավ արդյունք է տալիս: Այն թույլ է տալիս մեզ մանրակրկիտ գնահատել իրավիճակը, հաշվարկել բոլոր տարբերակներն ու հնարավորությունները և ճշգրիտ ժամանակացույց կազմել հակահարձակման համար, որը անակնկալի կրեթի թշնամուն: Նրանք, ովքեր կարող են լուռ մնալ և սպասել գործելու հարմար պահի, գրեթե միշտ առավելություն ունեն նրանց նկատմամբ, ովքեր զիջում են իրենց բնական անհամբերությանը:

Հակագրոհի արվեստին տիրապետելու առաջին քայլը ինքներդ ձեզ տիրապետել սովորելն է, հատկապես կոնֆլիկտային իրավիճակներում:

Երբ սովորեք ինքներդ ձեզ տիրապետել, կհայտնաբերեք, որ ձեր հնարավորությունները հրաշքով ընդլայնվել են: Ամենօրյա մանր բախումներում նյարդերը քայքայելու փոխարեն, այժմ կարող եք խնայել ձեր էներգիան՝ սպասելով հարմար պահի և օգտագործել ուրիշների սխալները ձեր օգտին ու պահպանել մտքի պարզությունն ու սթափությունը ամենադժվարին իրավիճակներում: Դուք կհայտնաբերեք հակահարվածի հսկայական հնարավորությունները այնտեղ, որտեղ մյուսները տեսնում են միայն նահանջի կամ նույնիսկ փախուստի անխուսափելիությունը:

Հաջող հակագրոհի գաղտնիքը անդդվելի մնալն է, երբ հակառակորդը նյարդայնացած և անհանգիստ է: 16-րդ դարում Ճապոնիայում տարածվեց նորարարական մարտական ոճ, որը կոչվում էր սինկագյո-րյու (անմարմին սովերի ուղի): Ձինվորը սկսում էր մենամարտը՝ կրկնելով հակառակորդի յուրաքանչյուր քայլը, պատճենելով նրա յուրաքանչյուր շրջադարձը, յուրաքանչյուր ժեստը, յուրաքանչյուր ցատկը: Սա բառացիորեն խելագարեցնում էր հակառակորդին, քանի որ նա չէր կարողանում հասկանալ սամուրայի մտադրությունները, չէր կարողանում որևէ իմաստ գտնել նրա արածի մեջ: Ինչ-որ պահի հակառակորդը կորցնում էր իր ինքնատիրապետումը, նրա ուշադրությունը թուլանում էր, և այդ ժամանակ սինկագյո սամուրայը արագ անցնում էր հարձակման՝ հասցնելով վճռորոշ, մահացու հակահարված:

Սինկագյո ոճը կիրառող սամուրայները կարծում էին, որ մահերը սուսերամարտում հաջողության գրավականը ոչ թե ակտիվությունն է, այլ պասիվությունը: Հակառակորդի շարժումները կրկնօրինակելով՝ նրանք ձեռք էին բերում նրա տրամադրությունը զգալու, մտադրությունները հասկանալու և մտքերը կարդալու ունակություն: Լիովին հանգիստ մնալով և համբերատար դիտարկելով՝ սամուրայը կարող էր ճշգրիտ որոշել այն պահը, երբ հակառակորդը կանցնի հարձակման: Այս պատրաստակամությունն արտացոլվում էր աչքերում՝ ձեռքերի հազիվ նկատելի ցնցման մեջ: Որքան ավելի շատ հուզմունք էր պատում այդ մարդուն, որքան ավելի շատ էր նա փորձում հարվածել սամուրային, այնքան ավելի անկայուն էր դառնում նրա դիրքը, այնքան ավելի խոցելի էր դառնում նա:

Սինկագյո սամուրայները չգիտեին ինչ է պարտությունը: Հակառակորդին ընդօրինակելը, երբ հետացատկով վերադառնում է այն ամենը, ինչ նրանք պարզապես հասցեագրել են ձեզ, հակագրոհի հզոր տարբերակներից մեկն է: Առօրյա կյանքում իմիտացիան և պասիվությունը հիպնոսացնում են մարդկանց, նրանց

զգոնությունն անհետանում է կամ բթանում և նրանք ընկնում են հարվածի տակ: Դա կարող է նյարդայնացնել մարդկանց, նրանց մոտ անհարմարության զգացում առաջացնել: Ի վերջո, նրանք զգում են, թե ինչպես են իրենց մտքերը դառնում ձերբ: Դուք ներծծում եք նրանց արյունը, ինչպես վամպիրները և ձեր պասիվ տեսքը միայն ծառայում է որպես շղարշ, որպեսզի նրանք, կորցնելով զգուշությունը, ենթարկվեն այս հնարքին: Մինչդեռ, ի պատասխան, դուք սեփական ոչինչ չեք տալիս նրանց՝ մնալով անթափանց: Նրանք չեն կարող կարդալ ձեր մտքերը: Ձեր հակագրոհը նրանց համար կատարյալ անակնկալ է հանդիսանում:

Հակագրոհը հատկապես արդյունավետ է նրանց դեմ, որոնց հաճախ բարբարոս են անվանում: Տղամարդկանց, իսկ երբեմն՝ կանանց, ովքեր իրենց բնույթով չափազանց ագրեսիվ են: Մի թողեք, որ նման մարդիկ վախեցնեն ձեզ: Նրանք իրականում թույլ են, հեշտությամբ խաբվում են և շփոթվում: Հնարքն այն է, որ նրանց գրգռեք՝ ձևացնելով թուլություն կամ հիմարություն, ստեղծելով տպավորություն, որ դուք հեշտ որս եք:

Հին Չինաստանում Մարտընչող թագավորությունների դարաշրջանում, Յի պետությունը հայտնվել է մեկ այլ պետության՝ Վեյի հզոր զորքերի հարձակման սպառնալիքի ներքո: Յի-ի հրամանատարները խորհուրդ խնդրեցին հայտնի ստրատեգ Սուն Բինից (Սուն- Յզի-ի հետնորդն ու հետևորդը): Նա ասաց նրանց, որ Վեյի թագավորության զորահրամանատարները վերևից ներքև են նայում Յի-ի բանակին՝ նվաստացուցիչ կերպով խոսելով մարտիկների մասին որպես վախկոտ: Դրանում, շարունակեց Սուն Բինը, հաղթանակի բանալին է թաքնված: Նա առաջարկեց պլան՝ մեծ զորքով մտնել Վեյի հողեր և զորքի գիշերակացի հազարավոր խարույկներ սարքավորել: Հաջորդ օրը անհրաժեշտ էր թողնել խարույկների կեսը, իսկ մեկ օր անց կիսով չափ կրճատել դրանք: Վստահելով Սուն Բինին՝ Յի-ի գեներալները վարվեցին այնպես, ինչպես նա խորհուրդ էր տալիս:

Վեյի թագավորության գլխավոր հրամանատարը, իհարկե, ժամանակին հետախուզությունից ստացավ ներխուժման լուրը, նշվեց նաև խարույկները: Նա կանխակալ կարծիք ուներ հակառակորդի վախկոտության մասին, հենց խարույկների թիվի նվազումն էլ խոսում էր այդ մասին: Արժեք հարձակվել հեծելազորի ուժերով և ջարդել փոքրաթիվ թշնամիներին, որին կհաջորդեր հետևակի հարվածը, և նրանք, չհանդիպելով դիմադրության, կմտնեն Յի: Սուն Բինը, իմանալով Վեյի հեծելազորի մոտենալու մասին, հաշվարկեց, թե որքան ժամանակ կպահանջվի նրանց տեղ հասնելու համար: Այնուհետև նահանջեց և իր զորքը դասավորեց նեղ լեռնանցքում: Նա հրամայեց կտրել մի հաստաբուն ծառ և կեղևահան անել, որից հետո գերանի վրա գրել. «Զորավար Վեյը կմեռնի այս ծառի մոտ»: Գերանը նետվեց այն ճանապարհի վրա, որով պետք է անցներ Վեյի բանակը, իսկ նետաձիգները թաքնվեցին լեռնանցքի երկու կողմերում: Ուշ գիշերը բանակի հրամանատար Վեյը, իր հեծելազորի գլխավորությամբ, հասավ այն տեղ, որտեղ գերանը փակել էր ճանապարհը: Նրա վրա ինչ-որ գրություն էր երևում, և նա հրամայեց ջահ վառել այն լուսավորելու համար: Զահի լույսը ազդանշան հանդիսացավ Յի-ի նետաձիգների համար: Նետերի

տեղատարափ անձրևը թափվեց ծուղակում հայտնված հեծլագործի վրա: Հրամանատար Վեյը, գիտակցելով, որ թակարդն է ընկել, ինքն իրեն զրկեց կյանքից:

Սուն Բինը Վեյի գլխավոր հրամանատարի դեմ իր ամբողջ գործողությունները հիմնեց այս մարդու ամբարտավան, տաքարյուն և կրակոտ անհատականության խորը ըմբռնման վրա: Այս հատկանիշները շահարկելով և նրա ազահությունն ու ագրեսիան բորբոքելով՝ Սուն Բինը կարողացավ ենթարկեցնել նրա միտքը: Դուք նույնպես պետք է ուսումնասիրեք այն զգացմունքները, որոնք ձեր հակառակորդները ամենադժվարն են հաղթահարում, ապա փորձեք դրանք գրգռել: Փոքր ջանքեր գործադրելով դուք կհասնեք նրան, որ նրանք կբացվեն, կգտնվեն ձեր հակազորոհի ուղղությամբ:

Ժամանակակից ընտանեկան հոգեբան Ջեյ Հեյլին նշում է, որ շատ դժվար մարդկանց համար ձևանալը ռազմավարություն է՝ ուրիշների նկատմամբ իշխանություն ձեռք բերելու մեթոդ: Նրանք իրենց թույլ են տալիս անտանելի, ներոտիկ լինելու իրավունք: Եթե դուք արձագանքում եք նրանց վարքագծին, զայրանում, փորձում եք հանգստացնել նրանց, ապա նրանք հասնում են հենց այն բանին, ինչ ուզում էին: Նրանք դիպչել են ձեր զգացմունքներին և գրավել ձեր ուշադրությունը: Մյուս կողմից, եթե դուք պարզապես անտեսում եք նրանց չարաճճիությունները՝ թույլ տալով նրանց սպառել իրենց զայրույթը, ապա դուք նրանց ջրաղացին եք ջուր լցնում և վերջիվերջո, նրանք իրավիճակն ավելի մեծ չափով են վերահսկում: Սակայն Հեյլին հայտնաբերեց բավականին հետաքրքիր մի բան: Այս դժվար մարդկանց վարքագծին զիջելը, նրանց պարանոիդ գաղափարների հետ համաձայնելը, նույնիսկ նրանց խրախուսել շարունակելը դրանք, կարող է փոխել դինամիկան, իսկ երբեմն նույնիսկ շրջել այն: Ի վերջո, դա այն չէ, ինչ դուք սպասում եք: Դա նշանակում է, որ նրանք հիմա անում են այն, ինչ դուք եք ուզում, ինչը նշանակում է, որ նրանք հանկարծ կորցնում են իրավիճակի նկատմամբ իրենց ամբողջ հետաքրքրությունը: Սա ջիու-ջիթսուի ռազմավարությունն է: Դուք օգտագործում եք ձեր հակառակորդի էներգիան նրանց դեմ: Ընդհանուր առմամբ, մարդկանց թույլ տալով հետևել իրենց բնական ընթացքին՝ տեղի տալով նրանց ներոգներին կամ բնական ազահությանը, ձեզ ավելի շատ իշխանություն կտա նրանց նկատմամբ, քան նրանց ակտիվորեն դիմադրելը: Նրանք կամ կհայտնվեն շատ տհաճ իրավիճակում՝ չափն անցնելով, կամ անհույս կերպով կշփոթվեն, և երկու արդյունքներն էլ ձեր օգտին են:

Եթե դուք դժվարության մեջ եք կամ այնպիսի իրավիճակում, երբ դուք պետք է պաշտպանվեք, ամենասարսափելի վտանգը ամեն ինչ չափազանցնելու ցանկությունն է: Մարդիկ հաճախ գերազնահատում են թշնամու հնարավորությունները՝ իրենց ավելի թույլ պատկերացնելով, քան իրականում է:

Հակազորոհի հիմնական սկզբունքն այն է, որ երբեք չհանձնվել, երբեք իրավիճակը անհույս չդիտարկել: Անկախ նրանից, թե որքան ուժեղ է թվում ձեր հակառակորդը, նա անխուսափելիորեն կունենա թույլ կողմեր, անպաշտպան թևեր, որոնք կարող են հարձակման ենթարկվել և օգտագործվել հակազորոհի համար: Ձեր

սեփական թուլությունը կարող է դառնալ ուժեղ կողմ, եթե այն ճիշտ խաղարկեք: Մի փոքր խելամտորեն և խորամանկությամբ կարող եք իրավիճակը շրջել ձեր օգտին: Սա միակ ձևն է, որով դուք պետք է նայեք ցանկացած խնդրի, ցանկացած դժվարության, որին կհանդիպեք:

Թշնամին հզոր է թվում, քանի որ ունի հատուկ ուժեղ կողմեր կամ կարողություններ: Դա կարող է լինել փող կամ կապեր, ավելի մեծ բանակ կամ տարածք, կամ նույնիսկ ավելի նուրբ բան՝ մարտական ոգի և հիմնալի հեղինակություն: Անկախ թշնամու ուժից, այն պետք է դիտարկել որպես պոտենցիալ թուլություն, թեկուզ միայն այն պատճառով, որ նրանք հույսը դնում են դրա վրա: Չեզոքացրեք դրանք, և նրանք կդառնան խոցելի: Ձեր նպատակն է նրանց դնել այնպիսի վիճակում, որտեղ նրանք չեն կարողանա օգտագործել իրենց առավելությունը:

Մ.թ. ա. 480 թվականին, երբ պարսից թագավոր Քսերքսեսը գրավեց Հունաստանը, նա ուներ շատ ավելին զորքեր և, ամենակարևորը, հսկայական գերազանցությամբ նավատորմ: Բայց աթենացի հրամանատար Թեմիստոկլեսը կարողացավ այս ուժը վերածել թուլության: Նա պարսկական նավերը ներքաշեց Սալամին կղզու հետևում գտնվող նեղ նեղուցներ: Այս վտանգավոր, անհանգիստ ջրերում նավերի բուն չափերը, նրանց թվացյալ ուժը վերածեցին մղձավանջի: Նրանք բացարձակապես զրկվեցին մանևրելուց: Հույները հակազդողներին և ջախջախեցին պարսկական նավատորմը: Սալամինի ճակատամարտը վերջ դրեց Հունաստանի նվաճմանը:

Եթե ձեր հակառակորդի առավելությունն արտահայտվում է նրանով, որ նա ավելի հմտորեն է պայքարում, ապա նրան չեզոքացնելու լավագույն միջոցը նրանից սովորելն է, նրան ընդօրինակելը, իսկ սովորած դասերը կիրառելը ձեր նպատակների համար: 19 — րդ դարում ապաշինները՝ Հյուսիսային Ամերիկայի հարավ-արևմուտքի բնիկ ամերիկյան ցեղերը, երկար տարիներ հաջողությամբ դիմագրավում էին ԱՄՆ զորքերի ներխուժմանը: Նրանք պարտիզանական պատերազմ էին մղում՝ հիմնված տեղանքի անթերի իմացության վրա: Նրանց դեմ ոչ մի հնարք չէր գործում: Թվում էր, թե իրավիճակն անհույս է, մինչև գործի անցավ գեներալ Ջորջ Քրուքը: Նա դավաճաններ գտավ ապաշինների շրջանում և վարձեց նրանց, որպեսզի նրանք սովորեցնեն իր զինվորներին տեղացիների պատերազմի վարման հնարքներին, ինչպես նաև աշխատեն հետախուզության մեջ: Հարմարվելով ապաշինների պատերազմի ոճին՝ Քրուքին հաջողվեց չեզոքացնել նրանց ուժը, և գործն ի վերջո ավարտվեց ապաշինների պարտությամբ:

Երբ դուք չեզոքացնեք ձեր հակառակորդի ուժեղ կողմերը, մնում է միայն ձեր թույլ կողմերը շրջել նրանց դեմ: Եթե, օրինակ, ձեր զորքերը փոքրաքանակ են, դա նշանակում է, որ նրանք շարժունակ են: Օգտագործեք նրանց շարժունակությունը հակազդողներու համար: Հնարավոր է, որ ձեր հեղինակությունը այնքան անբասիր չէ, որքան ձեր հակառակորդինը, դա նշանակում է մեկ բան, եթե ինչ-որ բան պատահի,

դուք ավելի քիչ բան կունենաք կորցնելու, քան նա: Ցեխ շարտեք և ինչ-որ բան կդիպչի հակառակորդին, և աստիճանաբար ձեր թշնամին կհավասարվի ձեր մակարդակին:

Ամեն դեպքում, դուք կարող եք գտնել միջոց ձեր թույլ կողմերը ձեր օգտին օգտագործելու համար:

Ուրիշների հետ շփվելու դժվարությունները անխուսափելի են. դուք միշտ պետք է պատրաստ լինեք պաշտպանվել և երբեմն անցնել հարձակման:

Ժամանակակից աշխարհի դիլեման այն է, որ հարձակողական ոճը՝ հարձակումը, անընդունելի է համարվում, և ձեր հեղինակությունը լրջորեն կվնասվի, դուք կհայտնվեք մեկուսացված և նույնիսկ նոր թշնամիներ ու չարախոհներ ձեռք կբերեք: Հակահարձակումը լուծումն է: Թող ձեր հակառակորդն անի առաջին քայլը. խաղացեք զոհի դերը: Առանց որևէ կանխարգելիչ գործողություն ձեռնարկելու՝ դուք դեռ ունեք ձեր հակառակորդի մտածողության վրա ազդելու հնարավորություն:

Ստիպեք նրանց խայծը կուլ տալ և գլխապտույտ հարձակվել: Երբ ինչ-որ բան ձախողվի, նրանք միայն իրենց կմեղադրեն, և, որ ամենակարևորն է, շրջապատի բոլորը մարդիք նույնպես կմեղադրեն նրանց: Այսպիսով, դուք կարող եք հաղթել պարկեշտության առումով, և ինքնին հաղթելով ճակատամարտը: Քիչ ռազմավարություններ կան, որոնք տալիս են նման ճկունություն և ուժ:

ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ԿԱՐԾԻՔ

Պատերազմի արվեստը, որպես ամբողջություն, ներկայացնում է լավ մտածված և համապարփակ հիմնավորված պաշտպանություն, որին հաջորդում է արագ և վճռական հարձակումը:

Նապոլեոն Բոնապարտ (1769–1821)

ՀԱԿԱՌԱԿ ԿՈՂՄԸ

Հակագրոհի ռազմավարությունը կիրառելի չէ բոլոր իրավիճակներում: Կան պահեր, երբ կարևոր է առաջինը հարվածել՝ հակառակորդին անակնկալի բերելով և ստիպելով պաշտպանվել, նախքան նա ժամանակ կունենա մտածելու: Զգոն եղեք և մանրակրկիտ վերլուծեք իրավիճակը: Եթե ձեր թշնամին չափազանց խելացի և խոհեմ է համբերությունը կորցնելու և ձեզ վրա հարձակվելու համար, կամ եթե սպասելով շատ բան կորցնելու ռիսկի եք դիմում, անցեք հարձակման: Ավելին, մի՛ հույսը դրեք նույն մեթոդի վրա անընդհատ: Ավելի լավ է փոխել դրանք՝ միշտ ունենալով մեկ կամ երկու ռազմավարություն պահեստում: Եթե ձեր թշնամիները սովոր են, որ դուք միշտ հակահարվածի եք հասցնելու, ժամանակն է զարմացնել նրանց և անել առաջին քայլը: Այսպիսով, փոխեք ռազմավարությունները: Գնահատեք իրավիճակը և փորձեք կայացնել որոշումներ, որոնք ամեն անգամ անակնկալի կբերեն ձեր հակառակորդին:

Սկիզբը.

- 1) https://www.datocms-assets.com/63284/1732378406-first-strategy_arm.pdf
- 2) https://www.datocms-assets.com/63284/1735414231-last-wars_arm.pdf
- 3) https://www.datocms-assets.com/63284/1740855330-keep-ur-head_arm.pdf
- 4) https://www.datocms-assets.com/63284/1744480072-drive-into-desperate_arm.pdf
- 5) https://www.datocms-assets.com/63284/1747510579-avoid-traps_arm.pdf
- 6) https://www.datocms-assets.com/63284/1751140077-divide-forces_arm.pdf
- 7) https://www.datocms-assets.com/63284/1754762031-crusade-war_arm.pdf
- 8) https://www.datocms-assets.com/63284/1759605001-force-estimate_arm.pdf

Աղբյուրը. <https://www.litres.ru/book/robert-grin/33-strategii-voyny-624835/chi>